ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

Դատական դեպարտամենտի կարիքների համար հեռուստացույցների, ջերմային տպիչների, համակարգչային սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/26» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «14» հունվարի 2026թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի անդամներ՝

Խորեն Պետրոսյան՝ Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության պետի ժամանակավոր պաշտոնակատար

Սեդրակ Սարդարյան՝ Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Նորայր Աղամալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի քարտուղար՝

Արուս Խաչատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ

1. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության, ինչպես նաև eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերի մուտքագրման (լրացման) մասին.

1.1. ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ ՍՊԸ-ի, Նարեկ Յուրիկի Կոստանյան Ա/Ձ-ի, ՄՄՄ ՏԵԽ ՍՊԸ-ի, «Պրոսելս» ՍՊԸ-ի, ԵԼ4008 ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, ինչպես նաև Համակարգում մուտքագրված (լրացված) են առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը:

1.2. ՀԻՊՈԿՐԱՏ ԴԵՆՏ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա է հրավերով պահանջվող էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1), հայտում բացակայում է հրավերով պահանջվող իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ Հավելված N 1.3-ը, ինչպես նաև Համակարգում մուտքագրված (լրացված) չէ 1-ին չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերի (հայտերում առկա փաստաթղթերի, ինչպես նաև Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերի)՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

2.1. ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ ՍՊԸ

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունը (Հավելված N 1) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան,
- ներկայացված հայտում առկա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ Հավելված N 1.3-ը կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան,
- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունը (Հավելված N 1), իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ Հավելված N 1.3-ը հաստատված են լիազորված անձի էլեկտրոնային թվային ստորագրությամբ, հայտով ներկայացված է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ՝ լիազորագիր, սակայն լիազորագրում նշված՝ լիազորված անձի նույնականացման քարտի վավերականության ժամկետը լրացած է,
- 2-րդ չափաբաժնի մասով Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը համապատասխանում է հրավերով սահմանված պայմաններին:

2.2. Նարեկ Յուրիկի Կոստանյան Ա/Ձ

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունը (Հավելված N 1) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում է բավարար,
- 3-րդ չափաբաժնի մասով Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը համապատասխանում է հրավերով սահմանված պայմաններին և գնահատվում է բավարար:

2.3. ՄՄՄ ՏԵԽ ՍՊԸ

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունը (Հավելված N 1) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում է բավարար,
- ներկայացված հայտում առկա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ Հավելված N 1.3-ը կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում է բավարար,
- 4-րդ և 8-րդ չափաբաժինների մասով Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին և գնահատվում են բավարար:

2.4. «Պրոսելս» ՍՊԸ

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում է բավարար,
- ներկայացված հայտում առկա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ Հավելված N 1.3-ը կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում է բավարար,

- 5-րդ չափաբաժնի մասով Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը համապատասխանում է հրավերով սահմանված պայմաններին և գնահատվում է բավարար:

2.5. ԵL4008 ՍՊԸ

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունը (Հավելված N 1) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան (դիմում հայտարարության 2)-րդ կետի երրորդ պարբերությամբ նախատեսված աղյուսակում նշված տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովի կողմից չի քննարկվել, քանի որ հրավերով հիշյալ աղյուսակի լրացման պահանջ սահմանված չէ) և գնահատվում է բավարար,

- ներկայացված հայտում առկա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ Հավելված N 1.3-ը կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում է բավարար,

- 6-րդ չափաբաժնի մասով Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը համապատասխանում է հրավերով սահմանված պայմաններին և գնահատվում է բավարար:

2.6. ՀԻՊՈԿՐԱՏ ԴԵՆՏ ՍՊԸ

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես.

- դիմում-հայտարարության երրորդ նախադասությունում նշված չէ մասնակցի ռուսերեն լեզվով անվանումը և կազմակերպաիրավական տեսակը (նշված է մասնակցի հայերեն անվանումը և կազմակերպաիրավական տեսակը),
- դիմում-հայտարարության «ղեկավարի պաշտոնը, ղեկավարի անուն ազգանունը» դաշտում նշված չէ ղեկավարի պաշտոնը,
- դիմում-հայտարարությունը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Ընդ որում, եթե մասնակցի կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթղթերը հաստատվում են լիազորված անձի էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ (լիազորագիր):

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

- նիստը կասեցնել և հաջորդ նիստը հրավիրել 2026թ. հունվարի 16-ին, ժամը 10:00-ին, Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնի վարչական շենքում (հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1):

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի քարտուղարին.

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի, ինչպես նաև «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/26» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 8.11-րդ կետի պահանջներով՝ **ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ ՍՊԸ-ի, ՀԻՊՈԿՐԱՏ ԴԵՆՏ ՍՊԸ-ի** հայտերում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների մասին էլեկտրոնային եղանակով՝ Համակարգի միջոցով ծանուցել հիշյալ մասնակիցներին՝ առաջարկելով մինչև սույն թվականի **հունվարի 15-ը ներառյալ** Համակարգի միջոցով շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ _____ Արթուր Ասատրյան

Անդամներ՝ _____ Խորեն Պետրոսյան

_____ Սեդրակ Սարդարյան

_____ Նորայր Աղամալյան

_____ Տիգրան Զեյնալյան

Քարտուղար՝ _____ Արուս Խաչատրյան